

ՍՈՆՅԱ ԱՊՐԵՍՈՎԱ

ԱՆՏԻԿ ԵՎ ԶՐԻԱՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ  
ՍԻՆԹԵԶԸ Թ.ՈՒԱՅԼԴԵՐԻ «ԿԱԲԱԼԱ» ՎԵՊՈՒՄ

Վիպասան և թատերագիր Թորնթոն Ուայլդերն իր գրական գործունեությունը սկսել է 20-րդ դարի 20-ական թվականներին: Մեծ համբավ ձեռք բերելով արդեն իսկ երեսուն տարեկան հասակում՝ իր ստեղծագործական կյանքի ընթացքում հեղինակն արժանացել է երեք Փուլիցերյան, Ազգային գրքային մրցանակների, Գրականության ազգային շքանշանի, Ազատության նախագահական մեդալի:

Ուայլդերը կարող է իրավամամբ համարվել «ամենաանտիկ» գրողը ամերիկյան գրական ասպարեզում, քանի որ իր հայրենակիցներից և ոչ մեկն իր գրական երկերում անտիկ թեմային այդքան տեղ ու դեր չի հատկացրել: Բավական մեծ հետաքրքրություն են ներկայացնում գրողի թե անտիկ տարրեր պարունակող ստեղծագործությունները և թե այն գործերը, որոնք հիմնված են անտիկ սյուժեների, մասնավորապես՝ անտիկ մյուսոսների և առասպելների վրա: Անտիկ աշխարհի նկատմամբ գրողի ունեցած հետաքրքրության մասին են վկայում իր իսկ հետևյալ խոսքերը. «Բոլոր այս առասպելներն առաջին հայացքից են միայն պարզունակ ու հասկանալի թվում: Կարելի է անգամ ասել, որ նրանք կրկին ու կրկին վերարտադրվում են որպես խրատ և օրինակելի են բոլորիս համար: Մինչդեռ ավելի խորը ուսումնասիրության դեպքում միայն հասկանում ենք, որ դրանցից շատերը, այդ թվում, օրինակ, Էդիպի պատմությունը, ինչպես նաև Իսահակի և Կասանդրայի գոհաբերությունը, շարունակում են դարեր ի վեր մարդկանց հիշողության մեջ պահվել, քանի որ դրանք բոլորը երկիմաստ են և բավականին բարդ մեկնաբանության համար»<sup>1</sup>:

Անտիկ թեմայի առկայությունը ի հայտ է գալիս հեղինակի արդեն իսկ առաջին վեպում՝ «Կաբալայում», որը որոշ չափով ինքնակենսագրական է և գրողի՝ Հռոմուս գտնվելու արդյունքն է: Յեղի համալսարանն ավարտելուց հետո Ուայլդերը մեկնեց Իտալիա՝ հնագիտական պեղումներին մասնակցելու նպատակով: Իր իսկ խոսքերով՝ հենց այդտեղ, ականատես դառնալով անտիկ և ժամանակակից քաղաքակրթությունների բախմանը, նա առաջին անգամ սկսեց լրջորեն մտորել ժամանակի և տարածության բնույթի շուրջ, որոնք, ըստ էության, միաձուլվում էին՝ հանդես գալով որպես մի ամբողջություն:

<sup>1</sup> Thornton Wilder. The Collected Short Plays. Volume II. N.Y. 1998. P 168.

Հռոմից ստացած տպավորությունները հետագայում հիմք ծառայեցին գրողի գրեթե բոլոր ստեղծագործությունների համար: Պատահական չէ, որ իր ուշ շրջանի ստեղծագործություններից մեկում՝ «Օր Ութերորդ» վեպում (*The Eighth Day*, 1963) նա գրում է. «Միայն թվում է, որ ժամանակը նման է հոսող գետի. այն ընդարձակ բնապատկեր է, իսկ իրականում միայն դիտորդի աչքն է շարժվում»<sup>2</sup>: Իր կերտած հերոսներից մեկի խոսքերով հեղինակը ժխտում է կյանքը պատկերող ամենահայտնի համեմատություններից մեկը՝ կանխավ որոշված ափերի երկայնքով շարունակ հոսող գետը: Դրա փոխարեն նա համեմատում է մարդկային կյանքը անորոշ երկարությամբ ու լայնությամբ և յուրօրինակ զարդանախշերով մի գորգի հետ: Գունավոր գործվածքն է շարադրում պատմությունը, և չնայած գորգի որոշակի անհամաչափություններին՝ այն մնում է պարզ, ճշմարտացի ու ամբողջական:

Հնագիտական պեղումներն ավարտվեցին 1920 թ-ին, և հենց այդ ժամանակ էլ ծավալվում են «Կաբալայում» նկարագրված իրադարձությունները: Պատահական չէ, որ սկզբնական շրջանում վեպը կրել է «Հռոմեացի ուսանողի հիշատակարանը» (*Memoirs of a Roman Student*) վերնագիրը: Վեպն ամբողջությամբ լույս տեսավ մի քանի տարի անց միայն՝ 1926 թ-ին, սակայն մինչ այդ դրա առանձին հատվածները տպագրվել էին տարբեր պարբերականներում:

«Կաբալան» չի պատկանում հեղինակի այն ստեղծագործությունների շարքին, որոնք անմիջականորեն հիմնված են անտիկ սյուժեի վրա: Ինչպես արդեն նշեցինք, վեպի գործողությունները ծավալվում են 20-րդ դարում Հռոմում: Առաջին հայացքից վեպը կարող է ռեալիստական թվալ. այն պատմում է համալսարանը նոր ավարտած և անտիկ աշխարհի մշակույթն ուսումնասիրելու նպատակով Հռոմ ժամանած ամերիկացի մի երիտասարդի և վերոհիշյալ «կաբալա» խմբի ներկայացուցիչների միջև եղած փոխհարաբերությունների մասին: Վեպը կազմված է առանձին՝ գրեթե ավարտուն տեսք ունեցող պատմվածքներից, որոնցից յուրաքանչյուրը պատմում է հերոսի և «կաբալայի» այս կամ այն ներկայացուցչի միջև առկա հարաբերությունների մասին: Հերոսը, փաստորեն, իրենց համար յուրատեսակ «խոստովանահայր» է դառնում, որին նրանք վստահում են իրենց գաղտնիքները և որից օգնություն են խնդրում<sup>3</sup>: Այսպես, նա փորձում է ճիշտ ուղու վրա դնել տասնվեցամյա երիտասարդ Մարկանտոնիոյին, օգնել ուսանող և ապագա հնագետ Բլերի հանդեպ անպատասխան սիրուց տառապող իշխանուհի Ալիքս դ'Եսպոլիին, ինչպես նաև կարդինալ Վաինիին, որն իր կյանքի մայրամուտին կասկածի տակ է առնում Աստծո նկատմամբ իր հավատը:

<sup>2</sup> Thornton Wilder. *The Eighth Day*. N.Y. 1982. P.27

<sup>3</sup> Նշենք, որ այդ նույն կոմպոզիցիոն սկզբունքը Ուայլդերը օգտագործելու է հետագայում "Տեոֆիլու Նորթ" վեպը գրելիս:

Այսպիսին է վեպի բովանդակությունը: Սակայն ընթացքում պարզվում է, որ «կաբալայի» բոլոր անդամները ոչ այլ ոք են, քան քրիստոնեության հաստատումից հետո անկում ապրած հեթանոսական աստվածներ: Վեպի հերոսը, որն էլ շարադրում է իրադարձությունների ընթացքը, մեկնում է Դոմո՝ քաջ գիտակցելով, որ այս քաղաքը հնագույն ավանդույթների օրրան է. «Պա Վերգիլիուսի երկիրն էր, և Նույնիսկ դաշտերից փչող քամու մեջ էլ, կարծես, զգացվում էր նրա շունչը, քանզի այն հողը, որ ժամանակին ծնունդ էր տվել մեծ պոետի զգացմունքներին, այժմ ինքն էլ էր դրանցով տոգորված»<sup>4</sup>:

«Կաբալայի» Մերկայացուցիչների հետ շփվելիս հերոսը զարմանքով բացահայտում է, որ հեթանոսությունը չի վերացել անգամ քրիստոնեության ավելի քան երկուհազարամյա իշխանությունից հետո և որ այն շարունակում է գոյատևել մինչ օրս: «քրիստոնեության հաստատումից հետո հին աստվածները չմահացան, - ասում է տիկին Գրիեն՝ «կաբալայի» անդամներից մեկը, - <...> Զրկվելով իրենց հետևորդներից՝ նրանք հետզհետե սկսեցին կորցնել իրենց աստվածային կերպարանքի որոշ-հատկանիշներ: Նրանք Նույնիսկ հասկացան, որ կարող են մահանալ, երբ կցանկանան: Սակայն, բավական է նրանցից որևէ մեկն իր մահկանացուն կնքի, և իր աստվածային բնույթն անմիջապես կփոխանցվի մեկ ուրիշին: Այն վայրկյանին, երբ մահանում է Սատուրնը, ինչ-որ մի մարդ երկրագնդի հեռավոր անկյուններից մեկում զգում է, թե ինչպես իր մեջ նոր անձնավորություն է ծնվում՝ թույլ չտալով անգամ շարժվել, կարծես՝ սեղմելով նրան ամուր զսպաշապիկի մեջ»<sup>5</sup>: Այնուհետև տիկին Գրիեն պատմում է մի հուլանդացու մասին, որը սկսում է զգալ իրեն ինչպես Մերկուրիի աստվածը, իսկ այն հարցին, թե արդյո՞ք այդ մարդը որևէ առնչություն ունի «կաբալայի» հետ, տիկին Գրիեն պատասխանում է, որ նա կապված է ոչ միայն «կաբալայի», այլ նաև իր՝ վեպի կենտրոնական հերոսի հետ, քանի որ հենց ինքն է, ըստ Գրիեի, Մերկուրիի աստծո հերթական մարմնացումը: Այստեղ հարկ է նշել, որ Ուայլդերը այդպես էլ չի տալիս իր վեպի հերոսի իսկական անունը: Այսպիսով, «կաբալիստները» նրան անվանում են Մերկուրի: Ինչպես հայտնի է, Մերկուրին համարվում է ոչ միայն աստվածների սուրհանդակը (փաստորեն, հենց այս դերն էլ հերոսը ստանձնում է վեպում), այլև մեռյալների ուղեկիցը: «Ես փորձում էի հիշել, - մտորում է հերոսը, - թե ով է մահացել Դոմոյում. գուցե Վերգիլիուսը... ոչ, նա թաղված է Նեապոլի մոտակայքում. Տա՛սոն <...>»<sup>6</sup>: Այսպիսով, ինչպես նկատում ենք, հերոսն ինքն իր վրա է վերցնում մեռյալների ստվերներն անդրշիրիմյան աշխարհի ուղեկցող Մերկուրիի դերը: Պատահական չէ այն փաստը, որ վեպում հանդիպում ենք նաև անգլիացի պոետ Ջոն Զիթսի

<sup>4</sup> Thornton Wilder. The Cabala. M., 1988. P.27.

<sup>5</sup> Ibid. P.128.

<sup>6</sup> Ibid. P.45.

«ստվերին», որին հերոսն այցելում է Յոռն ժամանելուց անմիջապես հետո: Պոետի անունը վեպում ընդհանրապես հիշատակված չէ, սակայն այն ամենը, ինչի մասին նա պատմում է, համընկնում է անգլիացի ռոմանտիկի կյանքի փաստերին՝ բժշկություն ուսումնասիրելը, մոր և եղբայրներից մեկի մահը թոքախտից, մյուս եղբոր՝ ԱՄՆ մեկնելը, ինչպես նաև իր սերը Յոմերոսի և հույն պոետի անգլիացի թարգմանիչ Ջ.Չեփմենի հանդեպ (վերջինիս Քիթսը նվիրել է իր հանրահայտ սոնետը)՝ ընդհուպ մինչև իր տապանաքարի վրա Քիթսի խնդրանքով փորագրված բառերը: «Երբ ես մահանամ, — դիմում է պոետը հերոս-Սերկուրիին, — հետևեք, որ Ֆրենսիսը կատարի ինձ տված խոստումը: Թող որ իմ շիրմին անունս չգրվի: Պարգապես գրեք. «Այստեղ թաղված է մեկը, ում անունը գրված է ջրի երեսին»<sup>7</sup>: Այսպիսով, Ուայլդերն իր վեպում միտումնավոր կերպով ժամանակավորիպուններ (անախրոնիզմներ) է օգտագործում՝ ոճաբանական հնար, որին նա բազմիցս դիմում է իր ստեղծագործություններում (ամերիկացի գրաքննադատ Մալքոմ Քաուլին իրավացիորեն անվանում է Ուայլդերին «ժամանակավորիպունների վարպետ» (master of anachronism))<sup>8</sup>:

Ինչպես հայտնի է, Քիթսը իրոք մահացել է Յոռնում, սակայն 1821 թ-ին, այսինքն՝ վեպում նկարագրվող իրադարձություններից մոտ մեկ դար առաջ: Այդ իսկ պատճառով պոետի կերպարը վեպում ներկայանում է ընդամենը որպես «ստվեր»:

Այնուամենայնիվ, Ուայլդերի հայեցակարգը ամբողջությամբ պարզաբանված չէր լինի, եթե նա իր հերոսին օժտեր միայն հեթանոսական աշխարհի ներկայացուցիչներին բնորոշ հատկանիշներով: Ինչպես հեղինակի այլ ստեղծագործությունների, մասնավորապես, «Անդրոսցի կինը» վեպի հերոսուհի Քրիսիդեն, «Կաբալայի» հերոսը նույնպես հանդիսանում է թե՛ հեթանոսական և թե՛ քրիստոնեական գաղափարների կրող: Այս առումով խորհրդանշական է այն փաստը, որ վեպի հերոսուհիներից մեկը նրան անվանում է Սամուելե՛ն՝ իբրև թե ի հիշատակ իր հավատարիմ շան: Սակայն, մեր կարծիքով, Ուայլդերը հատուկ է ընտրում հենց այդ անունը: Այն զուգահեռներ ունի Յին Կտակարանի հանրահայտ մարգարեներից մեկի՝ Սամուել մարգարեի անվան հետ, որին կաթոլիկ եկեղեցին համարում է քրիստոնեության նախագուշակ և դասել է սրբերի կարգը:

Սեկ այլ ուշադրավ փաստ. «Կաբալայի» առաջնորդը՝ տիկին Գրիեն, հերոսին հրավիրում է Տիվոլիում գտնվող իր առանձնատունը, իսկ այնուհետև՝ Կոլոննա ամառանոց: Եվ կրկին մենք ականատես ենք լինում երկու՝ անտիկ և ժամանակակից քաղաքակրթությունների, ավելի ստույգ՝

<sup>7</sup> Ibid. P 48.

<sup>8</sup> Malcolm Cowley, A Second Flowering. Works and Days of the Lost Generation. N.Y. Penguin Books. 1984. P.124.

հեթանոսական և քրիստոնեական Հռոմի բախման: Բանն այն է, որ Տիվոլիում է գտնվում ականավոր պոետ Հորացիուսի ամառանոցը, մինչդեռ Կոլոննա ամառանոցը ժամանակին պատկանել է Կոլոննա ազնվական տոհմին, որի ներկայացուցիչները մեծ դեր են խաղացել Հռոմի քաղաքական ու մշակութային կյանքում Վերածննդի դարաշրջանում: Եվ երբ հերոսն ընդունում է Կոլոննա այցելելու առաջարկը, տիկին Գրիեն ժպիտով դիմում է նրան. «Քրիստիանո, քրիստիանո»<sup>9</sup>:

Վեպում միանշանակ կարևոր դեր է կատարում Վերգիլիուսի կերպարը: Նա, ըստ էության, վեպի հերոսն է, այլ «ստվեր», որը հայտնվում է ինչպես վեպի սկզբնամասում (մեր կողմից մեջբերված հատվածում), այնպես էլ վերջաբանում, և դա նույնպես պատահական չէ: Վերգիլիուսը, լինելով անտիկ աշխարհի ներկայացուցիչ, միաժամանակ նաև քրիստոնեական գաղափարների կրող է: Ինչպես հայտնի է, Միջին դարերում անտիկ պոետը համարվել է նույնիսկ քրիստոնեության նախակարապետ՝ իր «Բուկոլիկների» 4-րդ էկլոգի մեկնաբանության հիման վրա (հիշենք նաև, որ հենց հեթանոս Վերգիլիուսն է Դանթեի «Աստվածային կատակերգությունում» ստանձնում այն դերը, որը միջնադարյան «տեսիլքներում» սովորաբար կատարում էին Մարիամ Աստվածածինը կամ հրեշտակները):

«Կաբալա» վեպի վերջում հերոսը, վերադառնալով հայրենիք՝ ԱՄՆ, փորձում է պատասխաններ գտնել մարդկային գոյության իմաստի վերաբերյալ իրեն մտատանջող հարցերին: Այդ ընթացքում նա օգնության է կանչում Վերգիլիուսի «ստվերին»՝ դիմելով նրան մերթ որպես «պոետների արքայազն», մերթ մեջբերելով «Աստվածային կատակերգությունից» վերցված Բեատրիչեի խոսքերը<sup>10</sup>, որոնք վերջինս ուղղում էր Վերգիլիուսին՝ խնդրելով օգնության ձեռք մեկնել անտառում մոլորված Դանթեին: Սակայն ուշագրավ է այն փաստը, որ պոետի «ոգին» հայտնվում է միայն նրանից հետո, երբ հերոսը դիմում է նրան հետևյալ խոսքերով. «Օ, մեծագույն ոգի հին աշխարհի և նորի մարգարե, որ հանճարեղ մարգարեությամբ գուշակեցիր գալուստը Նրա, ով կողջունի քեզ Իր բարձունքներում, դու, Եվրոպայի առաջին Քրիստոնյա, խոսիր ինձ հետ»<sup>11</sup>:

Ինչպես նշում է Ս.Ավերինցևը<sup>12</sup>, Նոր ժամանակների գիտնականները, ի տարբերություն Միջին դարերի «միամիտ մարդկանց», առաջնորդվում էին այն փաստով, որ Վերգիլիուսի ստեղծագործության իսկական իմաստը գուտ արդիական է և վերաբերում է լոկ իր դարաշրջանին: Սակայն չի կարելի հերքել այն փաստը, որ վերոհիշյալ տեքստի միջնադարյան մեկնաբանությունը, որքան էլ «միամիտ լինի», բացահայտում է ստեղծագործության հիմ-

<sup>9</sup> Thornton Wilder. The Cabala. M. 1988. P. 53.

<sup>10</sup> O anima cortese mantovana. Դանթե. Դժոխք, II, 58

<sup>11</sup> Thornton Wilder. The Cabala. M. 1988. P. 132.

<sup>12</sup> Аверинцев С. Образ античности. СПб. 2004. С. 222.

նական գաղափարը, և իսկապես մարգարեություն է մարդկության կյանքում հասունացող փոփոխությունների ու նոր ժամանակների հաստատման մասին: Վերը նշվածի ապացույց ենք համարում Քիվլինգի «Վերջին ծնն» (*The Last Ode*) բանաստեղծությունը՝ գրված Հորացիուսի անունից, որը մահվան շեմին խորհում է իր ընկերոջ՝ Վերգիլիուսի կանխազգացումների մասին:

Զնայած Վերգիլիուսի «Քուկոլիկների» 4-րդ էլիոգի նման մեկնաբանությունը ոչ լիովին է ճշգրիտ ճանաչվել, այնուամենայնիվ Վերգիլիուսը հետագայում շարունակել է ընկալվել որպես քրիստոնեության նախավկա: Այսպես, օրինակ, արգենտինացի ականավոր գրող Խորխե Լուիս Բորխեսը գրում է. «Երջանիկ են նրանք, ովքեր իրենց հիշողության մեջ են պահում Վերգիլիուսի և Քրիստոսի բառերը, քանզի այդ բառերի լույսը կապյծառացնի իրենց օրերը»<sup>13</sup>: Այդ մտքի ևս մեկ ապացույց կարող ենք գտնել 20-րդ դարի ավստրիացի գրող Հերման Բրոխի «Վերգիլիուսի մահը» (1945) վեպում, որը պատմում է հռոմեացի պոետի կյանքի վերջին ժամերի մասին: Այստեղ կրկին մեծ տեղ է զբաղեցնում Վերգիլիուսի՝ որպես քրիստոնեության նախակարապետի մասին պատկերացումը:

Վերգիլիուսին հաճախ անվանում են «ժամանակի նշանների» պոետ, քանի որ հենց նա կարողացավ դարձնել Հռոմը պատմության ավարտի և նոր մեկնարկի խորհրդանիշ: Այդ իսկ առումով խորհրդանշական է «Կաբալա» վեպի վերջաբանը, որտեղ Վերգիլիուսը, ժամապարհելով հերոսին հայրենիք՝ Միացյալ Նահանգներ, կարծես օրհնում է նրան՝ կոչ անելով նոր կյանքի և ստեղծագործության. «<...> Բազմաթիվ Հռոմներ են գոյություն ունեցել Հռոմից առաջ, և երբ Հռոմն անկում ապրի, Հռոմներ դարձյալ կլինեն: Փնտրի՛ր մի երիտասարդ քաղաք: Քաղաքը հարկավոր է կառուցել և ոչ թե պարզապես գոյատևել այնտեղ: <...> Հռոմը երբեմնի հզոր քաղաքներից մեկն էր: Եվ երբ քո քաղաքն էլ<sup>14</sup> բարձունքների հասնի և այնտեղ էլ հանճարներ ծնվեն, չմոռանաս նաև իմ քաղաքը»<sup>15</sup>:

Այսպիսով, Ուայլդերն իր առաջին իսկ ստեղծագործության մեջ բարձրացնում է հեթանոսական աշխարհի և քրիստոնեության փոխկապակցման խնդիրը: Վեպի հերոսն ինքը առաջինը դարձավ գրողի հետագա ստեղծագործությունների հերոս-«բարեբախների» շարքում, ինչպիսիք են Աստծո գոյության ապացույցներ փնտրող Հայր Ջոնիփերը («Սուրբ Լյուդովիկոս թագավորի կամուրջը»), մարդկային բնության կատարելությանն անկեղծ հավատացող Ջորջ Բրաշը («Երկինքն է իմ վերջնակետը»), մարդկային լավագույն որակների մարմնացումը հանդիսացող Ջոն Էլլին («Օր Ութերորդ») և այլն:

<sup>13</sup> Борхес Х.Л. Фрагменты апокрифического Евангелия // Иностранная литература. 12 (2002). С.7.

<sup>14</sup> Խոսքը վերաբերում է Ելու Յորդին:

<sup>15</sup> Thornton Wilder. The Cabala. M.: 1988. P.133.